

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒԹՔՈՒՄ

(1970 թ. հունվար—հունիս)

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Թումանյանի ծննդյան 100-ամյակը շուրջով տոնվել է Վառնայում: Վառնայի քաղաքային ռադիոյով տրված է հաղորդում Թումանյանի ստեղծագործությունների մասին: Հանդիսավոր նիստը տեղի է ունեցել հոկտեմբերի 20-ին, «Մա-կեդոնիա» սրահում:

Թումանյանի մասին զեկուցումով հանդես է եկել զրոգ Ա. Միուկը, որից հետո տրվել է զրա-կան-զեղարվեստական ճոխ համերգ:

«Երևան», 14 նոյեմբերի 1969

* * *

Հոկտեմբերի 31-ին խափարում, «Երևան» ակումբում նշվել է Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակը: Հանդիսավոր մասից հետո տրվել է համերգ:

«Երևան», 21 նոյեմբերի 1969

* * *

Ռուսում, Սիլիստրայում և Բուրգազում նո-յեմբերի 16-ին մեծ հանդիսավորությամբ նշվել է Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակը բուլ-ղարա-սովետական բարեկամության կոմիտեի, զրոգների միության և «Երևանի» տեղական վար-չության նախաձեռնությամբ:

«Երևան», 28 նոյեմբերի 1969

* * *

Նոյեմբերի 14-ին Վառնայի «Մակեդոնիա» սրահում շուրջով ու հանդիսավորությամբ նշվել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակը:

«Երևան», 28 նոյեմբերի 1969

* * *

Դեկտեմբերի 21-ին Պրովդիվում հանդիսավո-րությամբ նշվել է Կոմիտասի ծննդյան 100-ամ-յակը: Հանդիսավոր ժողովը բաց է արել կոմ-պոզիտոր Ա. Լիտմանը, զեկուցում է կարդացել Լրաժշտագետ Ս. Լազարովը, որից հետո զրա-կան-զեղարվեստական ճոխ համերգ է տրվել: Դեկտեմբերի 21-ին Բուրգազում ևս նշվել է Կո-միտասի 100-ամյակը:

«Երևան», 2 հունվարի

* * *

Դեկտեմբերի 25-ին Սոֆիայում բուլղարա-սովետական բարեկամության տանը նշվել է Կո-միտասի ծննդյան 100-ամյակը:

«Երևան», 9 հունվարի

Գ Դ Հ

Բեռլինի հայ գաղութը հանդիսավորությամբ նշել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակը: Գա-ղութի միության վարչության կողմից բացման խոսքով հանդես է եկել զոկտ. Ֆրունճյանը: Կո-միտասի մասին բանախոսել է Մեսրոպ վրդ. Գրիգորյանը: Վերջում տրվել է ճոխ համերգ:

«Ջահակիր», 5 մարտի

Ա Մ Հ

Կահիրեի հայ զեղարվեստասիրաց միության «Թեքեյան» սրահում դեկտեմբերի 17-ին տեղի է ունեցել Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամ-յակին նվիրված երեկույթ: Հանդիսավոր բաժնից հետո տրվել է համերգ:

«Ջահակիր», 25 դեկտեմբերի 1969

* * *

Կահիրեի հայ համայնքը մարտ ամսին շու-րջով տոնել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակը:

«Արև», 23 մարտի

* * *

Ապրիլի 23-ին Կահիրեում հանդիսավորա-պես նշվել է ապրիլյան եղևոնի 55-րդ տարե-դարձը, որը կազմակերպվել էր Կահիրեի հայ մշակութային երեք ակումբների կողմից:

«Ջահակիր», 30 ապրիլի

* * *

Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» հանդի-սասրահում ապրիլի 24-ին հանդիսավորությամբ նշվել է ապրիլյան եղևոնի նահատակների հի-շատակը:

«Արև», 4 մայիսի

Լ Ի Բ Ա Ն Ա Ն

Բելյուրում ապրիլի 22-ին կազմակերպվել է երեկույթ՝ նվիրված հայ ժողովրդի մեկ և կես միլիոն զոհերի հիշատակին: Երեկույթին ֆրանսե-րեն զեկուցել են Վազդեն Այդունին, Անտուան Արիսը և լիբանանցի հայտնի բանաստեղծ Սա-յիդ Աբելը:

«Ջարթոն», 30 ապրիլի

* * *

Բելյուրում բացվել է Միջին Արևելքի հայ նկարիչների գործերի ցուցահանդես:

Ցուցահանդեսում ներկայացված են 36 նկա-րիչների 57 գործեր՝ Լիբանանից, Սիրիայից, Ե-գիպտոսից, Հունաստանից և Իրաքից:

«Ջարթոն», 3 հունիսի

* * *

«Տար էլ նահար» հրատարակչությունը լույս է տեսցրել Երվանդ Օտյանի «Ընկեր փանջունին», որը գրական արաբերենով թարգմանել է Հովհաննես Աղապաշյանը: Երգիծանկարները կատարել է հգիպտահայ անվանի երգիծանկարիչ Ալ. Սարոյանը:

«Զարթոնք», 14 հունիսի

* * *

Ռեյդություն ապրիլի 20—28-ը տեղի է ունեցել լիբանանահայ մշակույթի շաբաթ, որի ժամանակ զեկուցումներ են կարդացել Զ. Մսերլըյանը՝ լիբանանահայ գաղութի պատմության, Լևոն Վարդանը՝ լիբանանահայ գրողների և գրականության, Ա. Տեր-Խաչատուրյանը՝ մամուլի մասին, Երվանդ Քասունին զեկուցել է հայագիտության մասին Լիբանանում: Մի շարք այլ զեկուցումներ նվիրված են հղել լիբանանահայ դպրոցին, թատրոնին, գեղարվեստական և երաժշտական կյանքին:

Բացվել է լիբանանահայ կյանքը պատկերող ցուցահանդես:

«Զարթոնք», 1 մայիսի

Ի Ր Ա Ն

Սպահանի համալսարանում սովորում են չորս հազար ուսանողներ, որոնցից հարյուրը հայեր են: Հայագիտական բաժնի վարիչն է Զավեն Դավթյանը, որի ջանքերով լավ հիմքերի վրա է դրված հայագիտական բաժինը:

Համալսարանի բժշկական, լեզվաբանական, մաթեմատիկական և այլ բաժիններում ուսանում են տարբեր քաղաքներից եկած հայ ուսանողներ:

«Աշխարհ», 28 հունվարի

* * *

Հ. Թումանյանի հոբելյանի օրերին Թեհրանում առանձին գրքով լույս տեսան «Անուշը», «Ախթամարը», «Փարվանան» Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ: Սպահանում Հրանտ Ղուկասյանի թարգմանությամբ հրատարակվեց «Անուշ» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ զետեղված են նաև Հ. Թումանյանի պոեմներն ու լեզնեղները, ինչպես նաև Թումանյանի կենսագրականը: Արա Հովհաննիսյանի թարգմանությամբ լույս է տեսել «Գիթորը»:

Թեհրանում «Թովմասյան եղբայրներ» մշակութային կազմակերպության նյութական միջոցներով հրատարակվել է «Թումանյանի հիշատակին» խորագիրը կրող հատորը, որը թարգմանել են պարսիկ և իրանահայ անվանի բանաստեղծներ Նադիր Նադիրփուրը, Սայեն, Գա-

լուստ Խանենցին և Ռ. Բենը: Հատորում թարգմանաբար տրված են «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Վայրէջք», «Այվազովսկու նկարի առջև», «Տխուր գիշեր», «Աստղերի հետ» և այլ ստեղծագործություններ:

«Զարթոնք», 27 փետրվարի

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Հունվարի 28-ից Պոլսում սկսել է լույս տեսնել գրական-երգիծական «Փորձանք» նոր շաբաթաթերթը:

«Փորձանքի» արտոնատեր խմբագիրն է գրող Երվանդ Կոպելյանը, պատասխանատու տնօրենը՝ Մաքրուհի Հակոբյանը:

«Զահակիր», 19 մարտի

Ֆ Ր Ա Ն Ս Ի Ա

Փարիզում մարտի 15-ին մահացել է ֆրանսահայ թատերագետ Արթուր Ադամովը:

«Սոր կյանք», 3 ապրիլի

* * *

Ապրիլի 24-ին Փարիզի Կավո սրահում տեղի ունեցավ հայոց մեծ ողբերգության 55-րդ տարեդարձին նվիրված երեկույթ:

* * *

Մարսելում ապրիլի 26-ին մեծ հանգիսավորությամբ նշվել է մեծ հղեռնի 55-րդ տարեդարձը:

«Աշխարհ», 2 մայիսի

* * *

Մայիսի 17-ին Վալանսի քաղաքապետության սրահում տեղի է ունեցել Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնակատարություն, որը կազմակերպել էր տեղի Ազգային միությունը Փարիզի Սիփան Կոմիտաս երգչախմբի մասնակցությամբ:

Վալանսի «Մեսրոպ Մաշտոց» ուսանողական խումբը կազմակերպել է Կոմիտասի կյանքն ու գործը պատկերող ցուցահանդես:

«Աշխարհ», 6 հունիսի

* * *

Մայիսի 22-ին Մարսելի օպերայում տեղի է ունեցել Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի հանգիսավոր ներկայացումը:

«Նոր կյանք», 5 հունիսի

Ա Ն Գ Լ Ի Ա

Լոնդոնում, մարտի 20-ին, Քամբրեյլթհինստիտուտի սրահում կազմակերպվել է Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված

երեկո լոնդոնահայ մտավորականների և կազմակերպությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Երեկոն բացել է հանձնախմբի ատենապետ Ասատուր Կյուզելյանը, այնուհետև զեկուցել է Լուիզ Վարդուկյանը: Դոկտ. Միշա Գյուտյանը անդերևն լեզվով կարդացել է իր ուսումնասիրությունը՝ նվիրված Հ. Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը: Երեկույթն ավարտվել է Թումանյանի ստեղծագործություններից կազմված համերգով:

«Զարթոնք», 18 ապրիլի

* * *

Լոնդոնի «Ռուբերտ Հարդ-Տեյվիս» հրատարակչությունը լույս է ընծայել հայկական հեքիաթների մի հավաքածու՝ «Երկինքն երեք խնձոր ինկավ» խորագրով:

«Նոր կյանք», 29 մայիսի

* * *

Լոնդոնի հայ համայնքը ապրիլի 24—26-ին շուքով նշել է ապրիլյան եղևնի նահատակների հիշատակը:

«Զարթոնք», 6 հունիսի

* * *

Լոնդոնում մայիսի 15-ին Հայ տան հյուրասրահում բացվել է փարիզահայ մանրանկարիչ Արսեն Չաքարյանի ցուցահանդեսը:

Ցուցահանդեսում ներկայացված են Թ—ԺՁ դարերի մանրանկարչության հայ գանձարանից վերցված՝ Չաքարյանի կողմից փայտի վրա վարտադրված 27 մանրանկարներ:

«Աշխարհ», 13 հունիսի

* * *

Լոնդոնի «Վիկտոր Հոլ» սրահում մայիսի 26-ին տեղի է ունեցել Լուիզա Պոզապալյանի երգահանդեսը: Ծրագրերը ամբողջությամբ բաղկացած է եղել հայկական ընտիր երգերից:

«Աշխարհ» թղթակիցը գրում է, որ Լուիզա Պոզապալյանը առաջին երգչուհին է, որ Կոմիտասի երգերից 11-ը կատարեց եվրոպական բեմում և մեծ հաջողության հասավ:

«Աշխարհ», 20 հունիսի

Ի Տ Ա Լ Ի Ա

Եղիշե Չարենցի գործերի ժողովածուն հրատարակվել է Միլանում: Ժողովածուն պարունակում է 28 գործ: Թարգմանությունը կատարել է իտալացի նշանավոր բանաստեղծ Մարիո Վիրթոնին: Իրբը ունի նախաբան և կենսագրական ակնարկ, ձևավորված է հայկական ազգային ուճով:

«Արև», 8 դեկտեմբերի

Շ Վ Ե Դ Ի Ա

Կարլ Սվենինգը շվեդերեն է թարգմանել հայ 15 հեղինակների պատմվածքներ, ամփոփելով դրանք «Ժամանակակից հայկական կարճ պատմվածքներ» վերնագրով գրքում: Գիրքը տպագրված է Ստոկհոլմում 1968 թ. վերջերին: Հրատարակության ծախսը հոգացել է ՅՈՒՆԵՍԿՈ-ն: Գիրքը բաղկացած է 301 էջից, ուր տեղ են գտել 15 հայ գրողների 20-ից ավելի պատմվածքներ, որոնց թվում են Գրիգոր Զոհրապի, Հովհաննես Թումանյանի, Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի, Շիրվանզադեի, Դերենիկ Դեմիրճյանի, Ավետիք Իսահակյանի և ուրիշների պատմվածքները:

Հակիրճ առաջաբանից հետո 10 էջում թարգմանիչը ընդհանուր ակնարկով ներկայացնում է հայ ժողովրդի պատմական անցյալը, աշխարհագրական տեղագրումը և ժամանակակից պատմությունը: Միաժամանակ գրքում տրված է հայ հեղինակների համառոտ կենսագրությունը:

«Զարթոնք», 4 հունվարի

Ա Ր Գ Ե Ն Տ Ի Ն Ա

Բուենոս-Այրեսում սկսել է հրատարակվել «Մունտո Արմենիո» («Հայ աշխարհ») անունով իսպաներեն թերթը: Հրատարակիչն է Մարտին Սանթուրյանը, խմբագիրը՝ Պերճ Աճեմյանը: Հրատարակիչների հավաստումով թերթը կոչված է իսպանախոս ժողովրդին և հայերեն չիմացող հայ սերնդին ծանոթացնել Հայաստանի այսօրվա կյանքին: Արդեն լույս են տեսել մի քանի համարներ:

«Լրաբեր», 31 հունվարի

Կ Ա Ն Ա Գ Ա

Կանադայի արևմուտքում՝ հաղաղ օվկիանոսի ափին գտնվող Վենքուվր նավահանգստային վայրում մոտ 350 հայեր նոր համայնք են կազմակերպում:

Համայնքն այժմ ունի հայ մշակութային միություն, փոքր երգչախումբ և պարի խումբ: Ամեն ամսի վերջին՝ շաբաթ օրերը կազմակերպվում է հանդես-հավաքույթ, ուր համայնքի անդամները հաղորդակցվում են հայ մշակույթին և հայ կյանքին:

«Նոր օր», 17 փետրվարի

Ա Մ Ն

Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» հայտնի թատերախաղը օպերայի է վերածել ամերիկացի երիտասարդ կոմպոզիտոր Ջեկ Պիսոնը: Այս օպերան առաջին անգամ պետք է ներկայացնի ամերիկյան հեռուստատեսությունը: Տատի դերը կատարելու է Նյու-Յորքի Մետրոպոլիտեն օպերայի մեներգչուհի Լիլի Չուգասոյանը:

«Նոր կյանք», 3 ապրիլի

Նյու-Յորքի մի շարք հայկական միությունների կազմակերպել են հիշատակահանգես՝ նվիրված ապրիլյան եղեռնի 55-րդ տարեդարձին:

«Ջահակիր», 14 մայիսի

Բոստոնի հայ համայնքը ապրիլի 26-ին կազմակերպել է հուշատուն՝ նվիրված մեծ եղեռնի 55-ամյակին:

«Լրաբեր», 23 մայիսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

P. CHARANIS, Ph. D., *The Armenians in the Byzantine Empire*. Galoust Gulbenkian Foundation Armenian Library, Lisboa, 63 p.

«Հայերը Բյուզանդական կայսրությունում» գիրքը լույս է ընծայվել Գ. Կյուլբենկյանի հիմնադրության շնորհիվ՝ Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պատմության պրոֆեսոր, դասախոս Պ. Չարանիսը գրքի առաջաբանում ասում է. «Այս գիրքը ուսումնասիրում է Բյուզանդիայում իշխանության գլուխ անցած հայկական գիտնականների պատմությունը, որը «մեծ ներդրում է ունեցել բյուզանդական կուլտուրայի զարգացման գործում»:

Գրքի ներածականը գրել է Սիրարիի Տեր-Ներսեսյանը: Նա հակիրճ խոսում է հայկական կամ մակեդոնական գիտնականի մասին, ցույց

տալով նրա պատմական դերը բյուզանդական կայսրության մեջ: «Այս հետաքրքիր և գիտական աշխատությունը, — կարգում ենք ներածականում, — պրոֆ. Չարանիսի կողմից օգտակար ծառայություն կմատուցի հայկական գիտնականների ուսումնասիրման գործին»: Հեղինակը քննական մոտեցում ունի պատմական այս կնճառ հարցին, ուղեցույց ունենալով հունական, հայկական, արաբական և ասորական բազմաթիվ սկզբնաղբյուրներ և հարյուրավոր պատմական աշխատություններ: Գրքի վերջում կա շատ արժեքավոր բիբլիոգրաֆիա, որը կազմել է հեղինակի աշակերտ Դին Միլլերը:

JOHN CARSWELL, *New Julfa. The Armenian Churches and other Buildings*. Clarendon Press Oxford, 1968, 100 p. VIII—XV and 96 plates.

«Նոր Ջուլֆայի հայկական եկեղեցիները և ուրիշ շինությունները» աշխատությունը Նոր Ջուլֆայի հայկական եկեղեցիները ուսումնասիրելու առաջին փորձն է անգլերեն: Այդ հիանալի ճարտարապետական կոթողները կառուցվել են հայ առևտրականների կողմից 1606—1728 թթ.:

Գիրքը բաղկացած է ներածականից, առաջաբանից, երեք գլուխներից, հավելվածից, բիբլիոգրաֆիայից և 96 լուսանկարից: «Այս աշխատության հիմնական նպատակն է, — իր ներածականում ասում է հեղինակը, — ուսումնասիրել և հետազոտել Ջուլֆայի պատմա-ճարտարա-

պետական հուշակապ կոթողները»: Ջոն Կարսվելը տվել է հայկական գաղութի պատմությունը, նրա կարևոր պատմական դերը համաշխարհային առևտրի մեջ: Գրքում ներկայացված է յուրաքանչյուր եկեղեցու պատմությունը, հատկազգիծը և մի քանի լուսանկարներ: Կան նաև ուսումնասիրություններ որմնանկարների մասին: Հավելվածում գետնիցված են ճանապարհորդների հուշերն ու հիշատակությունները հայ բնակչության մասին: Այստեղ տարբեր լեզուներով կարգում ենք հայերի սովորույթների, նիստ ու կացի, բարքերի և զգեստների մասին:

E. MICHLE STONE. *The Testament of Levi*. A first study of the armenian MSS of the testaments of the XII patriarchs in the convent of St. James (With text, critical apparatus, notes and translation), Printed and published by St. James Press, The Armenian Patriarchate, Jerusalem, May 1969, 203 p.

Ե. Մ. Ստոնի «Կտակ Ղեւեայ» գիրքը առաջին գիտական ուսումնասիրությունն է երեսուցեմի ա. Հակոբ վանքի մատենադարանում գտնվող 12 առաքյալների կտակարանների ձեռագրերի մասին:

Երկը բաղկացած է առաջաբանից, 3 մասից՝ 2 հավելվածից և 5 ինդեքսից: Ե. Ստոնը առաջաբանում գրում է. «Հայկական ձեռագրերը բացառիկ նշանակություն ունեն համաշխարհային մատենագիտության համար: Ներկա աշխատու-